ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 19.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2018/17

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 01.02.2018թ. թիվ 03/26-3/1623-18 գրությամբ «Նորակ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Արարատի մարզի Սայաթ-Նովայի համայնքապետարանի 31.01.2018թ. թիվ 01-184 գրության հիման վրա, 01.02.2018թ. թիվ 03/26-3/1623-18 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Նորակ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Նորակ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Նորակ» ՍՊԸ-ն Խորհրդին ուղղված 05.02.2018թ. գրությամբ հայտել է հետևյալը.

«Նորակ» ՍՊԸ-ն ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում օրենքով սահմանված կարգով, այդ թվում նաև գնումների ոլորտում:

ՀՀ Արարատի մարզի Սայաթ-Նովա համայնքապետարանի կարիքների համար տրանսֆորմատորային ենթակայանի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԱՄՍՆՀ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1» ծածկագրով գնման ընթացակարգ: Գնման ընթացակարգին մասնակցել է 1 անձ:

Գնման ընթացակարգին հաղթող է ճանաչել կամ որ նույն է 1-ին տեղն է զբաղեցրել «Նորակ» ՍՊԸ-ն:

Ըստ Սայաթ-Նովա համայնքի 01-184 գրության, վերջինս համապատասխան հարցում է ուղարկել ՀՀ պետական եկամուտների կոմիտե՝ ճշտելու, թե որքան են կազմում «Նորակ» ՍՊԸ-ի հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորությունների չափը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տեղեկացվել է, որ «Նորակ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պատավորություն 21 185 266 ՀՀ դրամի չափով, որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված շեմը՝ 50,000 ՀՀ դրամը:

Նույն գրությամբ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը հայտնել է, որ հարկային պարտավորությունները սահմանող ստուգման ակտը գտնվում է գանգատարկման փուլում:

ՀՀ Վարչական դատարանում 27.11.2017թ-ին հարուցվել է ՎԴ3/0255/05/17 վարչական գործն՝ ըստ հայցի «Նորակ» ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի 31.10.2017թ թիվ 1012740 ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրված գրավոր տեղեկությունը, համաձայն որի՝ «Նորակ» ՍՊԸ-ն ունի հարկային պարտավորություններ, հիմնված է հենց վերը նշված ստուգման ակտի վրա:

ՀՀ Վարչական դատարանը 29.12.2017թ. հրապարակել է վճիռ՝ եզրափակիչ մասի հետևյալ բովանդակությամբ. «Թիվ ՎԴ3/0255/05/17 վարչական գործով վարույթում առկա «Նորակ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ պատասխանողի կողմից 31.10.2017 թվականին կազմված թիվ 1012740 ակտն ամբողջությամբ անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել մասնակի: Անվավեր ճանաչել 2017 թվականի հոկտեմբերի 31-ին կազմված Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության թիվ 1012740 ակտի «Շահութահարկ» վերտառությամբ 1-ին և «Ավելացված արժեքի հարկ» վերտառությամբ 3-րդ միջամտող կետերը:»:

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրված տեղեկությամբ նշված հարկային պարտավորությունները վերաբերվել են «Նորակ» ՍՊԸ-ի ԱԱՀ և շահութահարկի գծով պարտավորություններին:

Վերը նշված դատական ակտը 05.02.2018թ. դրությամբ բողոքարկված չի, մտել է օրինական ուժի մեջ:

Բացի վերոգրյալը, ԱՎԴ/3176/02/17 քաղ. գործով դատարանը 29.12.2017թ. բավարարել է հայցվոր «Նորակ» ՍՊԸ-ի միջնորդությունը՝ հայցի ապահովում կիրառելու մասին, համաձայն որի արգելվել է պատասխանող Արարատի մարզպետարանին, 3-րդ անձինք ՀՀ Ֆինանսների նախարարությանը, ՀՀ Գնումների Բողոքարկման Խորհրդին հայցվոր «Նորակ» ՍՊԸ-ի նկատմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու գործողությունների կատարումը:

Դատարանի կողմից տրված կատարողական թերթի հիման վրա ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայությունում հարուցվել է 03934873 կատարողական վարույթը:

ՀՀ ԱՆ ԴԱՀԿ Ծառայության Արարատի մարզային բաժնի կողմից 25.01.2018թ. կայացվել է որոշում՝ կատարողական վարույթն ավարտելու մասին, քանի որ կատարողական թերթի պահանջներն ամբողջությամբ կատարված են եղել:

Ընկերությունը գտնում է, որ սույն դիրքորոշումը հիմնավոր է, բխում է համապատասխան իրավական ակտերից, արդյունքում «Նորակ» ՍՊԸ-ն չի կարող ներառվել գնումներին մասնակցելու իրավունք չունեցող անձնանց ցուցակում, հիմքում ունենալով ներքոհիշյալ պատճառաբանություններն ու հետևությունները:

Պրոցեսուալ տեսանկյունից.

Ինչպես արդեն իսկ նշվել է առկա են դատական ակտեր, որոնցից՝

- ՎԴ3/0255/05/17 վարչական գործով կայացված վճռով վերացվել է «Նորակ» ՍՊԸ-ի համար հարկային պարտավորություններ սահմանող ակտը, որն ստացել է օրինական ուժ:
- ԱՎԴ/3176/02/17 քաղ. գործով 29.12.2017թ. կայացվել է որոշում հայցի ապահովում կիրառելու վերաբերյալ, այն է՝ արգելելու սույն վարույթով մասնակիցներին, նաև Արարատի մարզպետարանին նախաձեռնելու կամ կատարելու «Նորակ» ՍՊԸ-ին գնումներին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ընդգրկելու վերաբերյալ գործողություններ:

Վերը նշված երկու դատավարական ակտերի ներգործության իրավական ռեժիմի պարզման համար անհրաժեշտ է հղում կատարել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածին, համաձայն որի օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, իրավաբանական անձանց և քաղաքացիների համար ու ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

Վերը նշված իրավանորմը որևէ բացառություն չի նախատեսում օրինական ուժի մեջ մտած դատական ակտի ներգործության համար: Այսինքն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտն ըստ էության պարտադիր է մասնավոր և հանրային իրավունքի սուբյեկտների համար՝ առանց բացառությունների:

Ի պատասխան Սայաթ-Նովա համայնքի ղեկավարի գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված գրությամբ հղում է կատարվել մրցույթի կազմակերպման ընթացքում գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 13, 16, 23-27, 28.5 և 37 հոդվածներին: Զարմանալիորեն պետք է նշել, որ այդ իրավանորմերը որևէ կապ չունեն այսպես կոչված վիճելի իրավահարաբերությունների հետ: Նշված իրավանորմերը վերաբերվում են հարկային պարտավորության սահմանմանը, տույժերի հաշվարկմանը, արտադատական կարգով հարկային մարմնի պաշտոնատար անձանց գործողությունների բողոքարկման հետևանքներին: Թերևս մի փոքր անդրադառնանք իրավահարաբերությունների ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածին, համաձայն որի հարկային մարմնի պաշտոնատար անձանց գործողությունների

բողոքարկումը չի դադարեցնում հարկերի գանձումը: Բողոքը քննության առնող հարկային մարմինը (վերադաս հարկային մարմնի համաձայնությամբ) իրավունք ունի մինչև բողոքի լուծումը դադարեցնել հարկի գանձումը: Վերը նշված իրավանորմի դիսպոզիցիայից ակնհայտ է, որ խոսքը վերաբերվում է բացառապես հարկային մարմնի վերադաս մարմնին պաշտոնատար անձանց գործողությունները բողոքարկելու հետևանքներին:

Բացի այդ իրավական նորմերի կամ իրավական ակտերի մրցակցության պայմաններում որպես գլխամասային իրավական ակտ հանդես է գալիս ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը: Համաձայն այդ իրավական ակտի 83-րդ հոդվածի 1-ին մասի վիճարկման հայցի վարույթ ընդունելը կասեցնում է վիճարկվող վարչական ակտի կատարումը մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, բացառությամբ՝ 1) օրենքով նախատեսված այն դեպքերի, երբ վարչական ակտը ենթակա է անհապաղ կատարման. 2) այն դեպքերի, երբ վարչական մարմինը վարչական ակտ (ներառյալ՝ վարչական բողոքի վերաբերյալ ըստ էության որոշում) ընդունելիս գրավոր ձևով հիմնավորել է, որ անհապաղ կատարումն անհրաժեշտ է՝ ելնելով հանրային շահերից. 3) այն դեպքերի, երբ վիճարկվում է կատարողական վարույթի ընթացքում հարկադիր կատարողի կողմից կայացված վարչական ակտ: Կոնկրետ սույն դեպքում՝ ՎԴ3/0255/05/17 վարչական գործով չի վիճարկվել հարկադիր կատարողի կողմից կայացված որոշումը, ինչպես նաև հարկային մարմնի կողմից իրականացված ստուգումների արդյունքում կազմված ստուգման ակտը չի հանդիսանում անհապաղ կատարման ենթակա ակտ:

Տեսականորեն, եթե ընդունենք ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի և հարկերի մասին օրենքի 37-րդ հոդվածի միջև առկա են հակասություններ, ապա անհրաժեշտ է ղեկավարվել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ մասով, համաձայն որի հավասար իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերի կամ նույն իրավական ակտի տարբեր մասերի միջև հակասության դեպքում պետական և տեղական ինքնակառավարման մարմինները ֆիզիկական ու իրավաբանական անձանց հետ հարաբերություններում պետք է կիրառեն ֆիզիկական և իրավաբանական անձանց համար նախընտրելի նորմատիվ իրավական ակտը կամ դրա մասը:

Այժմ անցնենք ԱՎԴ/3176/02/17 քաղ. գործով 29.12.2017թ. Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի կողմից կայացված հայցի ապահովման կիրառման որոշմանը: Այս առումով ունենք երկու դատավարական բնույթ կրող ակտեր, դրանք են՝

- Դատավարական ակտը՝ հայցի ապահովում կիրառելու մասին և՝
- ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության կողմից կայացված որոշումը կատարողական վարույթն ավարտելու մասին:

Հայցի ապահովման մասին դատավարական ակտն ըստ էության գործում է ՀՀ քաղ. դատ. օր. 14-րդ հոդվածով սահմանված իրավական ռեժիմով, այսինքն պարտադիր է բոլոր հանրային և մասնավոր իրավունքի սուբյեկտների համար:

Տվյալ դեպքում հատկանշական է այն միտքը, որ ՀՀ օրենսդրությունը կարևորելով օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կատարման իրավական նշանակություն ունեցող սկզբունքը, քրեականացրել է դատական ակտերի դիտավորյալ չկատարումը: Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 353-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն օրինական ուժի մեջ մտած դատավճիռը, վճիռը կամ դատական այլ ակտը (այսուհետ՝ դատական ակտ) դատական ակտում սահմանված ժամկետում կամ ժամկետ սահմանված չլինելու դեպքում դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց կողմից դիտավորությամբ չկատարելը՝...:

ՀՀ ֆինանսների նախարարությունը հայցի ապահովման կիրառված լինելու պայմաններում պարտավոր էր ընթացք չտալ Սայաթ-Նովա համայնքի ղեկավարի գրությանը՝ «Նորակ» ՍՊԸ-ին գնումների մասնակցության իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու վերաբերյալ գործողություններ ձեռնարկելուն:

ՀՀ Ֆինանսների նախարարությունը պարտավոր էր չուղարկել գրություն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ընթացակարգ սկսելու համար:

ՀՀ գնումների բողոքարման խորհուրդը պարտավոր էր մերժել ՀՀ ֆինանսների նախարարության առաջարկը ընթացակարգ սկսելու վերաբերյալ:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու

միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Համաձայն ՀՀ քաղ. օր. 128-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետությունը և համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Խորհուրդն անշահախնդիր և անկախ քննություն իրականացնող մարմին է, որը շահագրգռված չէ կոնկրետ գնումների գործընթացի արդյունքներով և իր պարտականությունների ու իրավունքների կատարման ժամանակ պաշտպանված է արտաքին ազդեցություններից: Խորհրդի անդամները բողոքներն ուսումնասիրում են պատշաճ մանրամասնությամբ և անաչառորեն: Խորհրդի անդամները սույն օրենքով նախատեսված լիազորություններն իրականացնելիս անկախ են գնման գործընթացի մասնակիցներից, այդ թվում՝ պատվիրատուներից, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ու պաշտոնյաներից և պարտավոր են բացառապես ղեկավարվել օրենքով և կիրառել այն:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից ըստ էության խախտվել է վերը նշված իրավանորմի պահանջը, քանի որ նշված պետական մարմինների կողմից ըստ էության իրականացվում են ոչ իրավաչափ բնույթի գործողություններ, որպեսզի «Նորակ» ՍՊԸ-ն հետագայում չկարողանա մասնակցել գնումների գործընթացին:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների

ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ: Գնումներին մասնակցելու օրվա դրությամբ ստուգման ակտի գործողությունը կասեցված է եղել, կասեցումն էլ իր հերթին ենթադրում է ակտի գործողության ժամանակավոր դադարեցում: Համաձայն ՀՀ Իրավական ակտերի մասին օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի Իրավական ակտի գործողությունը դադարում է՝իրավական ակտի գործողությունը կասեցվելու դեպքում:

Այսինքն ըստ էության սին է ՀՀ ֆինանսների նախարարության այն փաստարկը, որ հայտ ներկայացնելու օրվա դրությամբ «Նորակ» ՍՊԸ-ն ունեցել է հարկային պարտավորություններ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ «Նորակ» ՍՊԸ-ն պահանջել է անհապաղ դադարեցնել «Նորակ» ՍՊԸ-ին գնումների իրավունք չունեցող անձնաց ցանկում ներառելու ընթացակարգը՝ դրա անհիմն և ապօրինի լինելու կապակցությամբ:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 06.02.2018թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ «Նորակ» ՍՊԸ-ի կողմից դատական կարգով վիճարկվել է Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմք դիտարկվող ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու փաստը և 05.02.2018թ. օրինական ուժի մեջ է մտել Ընկերության հայցը բավարարելու մասին ՀՀ վարչական դատարանի որոշումը, ուստի Ընկերությանը ցուցակում ներառելու հիմք որպես այդպիսին առկա չէ:

3. <u>ՀՀ Արարատի մարզի Սայաթ-Նովայի համայնքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ Արարատի մարզի Սայաթ-Նովայի համայնքապետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 31.01.2018թ. թիվ 01-184 գրությամբ հայտնել է, որ ՀՀ Արարատի մարզի

Սայաթ-Նովայի համայնքապետարանի կարիքների համար տրանսֆորմատորային ենթակայանի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԱՄՍՆՀ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի շրջանակում հայտ է ներկայացրել թվով մեկ կազմակերպություն:

Հայտերի գնահատման արդյունքում առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Նորակ» ՍՊԸ-ն: ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է ներկայացվել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե:

Հարցման հիման վրա ստացվել է եզրակացություն, ըստ որի Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարային պարտավորություն՝ 21 185 266 ՀՀ դրամի չափով, որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված շեմը՝ 50 000 ՀՀ դրամը:

Ընդ որում՝ ստացված եզրակացության մեջ նշված է եղել, որ ակտը գտնվում է գանգատարկման փուլում:

Վերոգրյալից ելնելով՝ գնահատող հանձնաժողովը կասեցրել է Ընթացակարգը, որից հետո 15.01.2018թ. թիվ 01-182 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն տալ պարզաբանում, եզրակացությունը որակել իրականությանը չհամապատասխանող: Ստացվել է գրության պատասխան, որի մեջ ամրագրվել է հետևյալը. «Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ անկախ «Վարչարարության հիմքումների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով բողոքարկվող վարչական ակտի կասեցումից, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն չունենալու հանգամանքը «Նորակ» ՍՊԸ-ի կողմից չի հիմնավորվել:

Այսիսով՝ խախտվել է գնման գործընթացի շրջանակում Ընկերության կողմից ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 06.02.2018թ. ժամը 11:00-ի նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/17 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/17 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ Արարատի մարզի Սայաթ-Նովայի համայնքապետարանի կողմից ՀՀ Արարատի մարզի Սայաթ-Նովայի համայնքապետարանի կարիքների համար տրանսֆորմատորային ենթակայանի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԱՄՍՆՀ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1» ծածկագրով գնման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «Նորակ» ՍՊԸ-ն 28.12.2018թ. հայտ է ներկայացրել:

2. Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԱՄՍՆՀ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.12.2018թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետով կայացված որոշմամբ «Նորակ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

4. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով սահմանված կարգով 10.01.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Նորակ» ՍՊԸ-ն 28.12.2017թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ***ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 21 185 266 ՀՀ դրամի չափով: Նույն եզրակացության մեջ նշվել է, որ ակտը գտնվում է գանգատարկման փուլում:***

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.01.2018թ. ժամը 14:00-ի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Նորակ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

6. «Նորակ» ՍՊԸ-ն 23.11.2017թ. հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, ՀՀ ֆինանսների նախարարության՝ պատասխանողի կողմից 31.10.2017թ. կազմված թիվ 1012740 ակտն ամբողջությամբ անվավեր ճանաչելու պահանջի մասին:

7. ՀՀ վարչական դատարանի 29.12.2017թ. թիվ ՎԴ3/0255/05/17 վճռով «Նորակ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, ՀՀ ֆինանսների նախարարության՝ պատասխանողի կողմից 31.10.2017թ. կազմված թիվ 1012740 ակտն ամբողջությամբ անվավեր ճանաչելու պահանջի մասին բավարարվել է մասնակի և անվավեր է ճանաչվել 31.10.2017թ. կազմված ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության թիվ 1012740 ակտի «Շահութահարկ» վերտառությամբ 1-ին և «Ավելացված արժեքի հարկ» վերտառությամբ 3-րդ միջամտող կետերը:

8. ՀՀ վարչական դատարանի 29.12.2017թ. թիվ ՎԴ3/0255/05/17 վճիռը 05.02.2018թ. մտել է օրինական ուժի մեջ:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 01.02.2018թ. թիվ 03/26-3/1623-18 գրությունը, ՀՀ Արարատի մարզի Սայաթ-Նովայի համայնքապետարանի 31.01.2018թ. թիվ 01-184 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկման հայցի վարույթ ընդունելը կասեցնում է վիճարկվող վարչական ակտի կատարումը մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն

զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման

խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

ՀՀ Արարատի մարզի Սայաթ-Նովայի համայնքապետարանի կողմից ՀՀ Արարատի մարզի Սայաթ-Նովայի համայնքապետարանի կարիքների համար տրանսֆորմատորային ենթակայանի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԱՄՍՆՀ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1» ծածկագրով գնման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «Նորակ» ՍՊԸ-ն 28.12.2018թ. հայտ է ներկայացրել:

Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԱՄՍՆՀ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.12.2018թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետով կայացված որոշմամբ «Նորակ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով սահմանված կարգով 10.01.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Նորակ» ՍՊԸ-ն 28.12.2017թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ***ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 21 185 266 ՀՀ դրամի չափով: Նույն եզրակացության մեջ նշվել է, որ ակտը գտնվում է գանգատարկման փուլում:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.01.2018թ. ժամը 14:00-ի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Նորակ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Այսպես՝ 03.08.2017թ. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի ժամանակավոր պաշտոնակատարի կողմից հրապարակված թիվ 1012740 հանձնարարագրով ՀՀ ԿԱ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության ստուգումների թիվ 9 բաժնի համապատասխան հարկային տեսուչներին հանձնարարվել է մինչև 15 անընդմեջ աշխատանքային օրվա ընթացքում «Նորակ» ՍՊԸ-

ում անցկացնել բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում:

Ստուգման արդյունքնում 18.10.2017թ. կազմվել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության թիվ 1012740 ակտի նախագիծը, որով շահութահարկի գծով գանձնման ենթակա գումարն ամրագրվել է 8 637 732 ՀՀ դրամի չափով, իսկ ավելացված արժեքի հարկի գծով՝ ընդամենը 23 325 850 ՀՀ դրամի չափով, վերադարձման ենթակա գումարը՝ 2 455 400 ՀՀ դրամ:

Ստուգման արդյունքում 31.10.2017թ. կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության թիվ 1012740 ակտը, ըստ որի ստուգումն անցկացվել է 04.09.2017-09.10.2017թթ. և Ընկերությանն առաջադրվել է լրացուցիչ գանձնման ենթակա ընդամենը 23 325 850 ՀՀ դրամ գումար՝ ***շահութահարկի գծով*** գանձնման ենթակա գումարն ամրագրվել է 8 637 732 ՀՀ դրամի չափով, իսկ ***ավելացված արժեքի հարկի*** գծով՝ 14 688 118 ՀՀ դրամի չափով, վերադարձման ենթակա գումարը՝ 2 455 400 ՀՀ դրամ:

«Նորակ» ՍՊԸ-ն 23.11.2017թ. հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, ՀՀ ֆինանսների նախարարության՝ պատասխանողի կողմից 31.10.2017թ. կազմված թիվ 1012740 ակտն ամբողջությամբ անվավեր ճանաչելու պահանջի մասին:

ՀՀ վարչական դատարանի 29.12.2017թ. թիվ ՎԴ3/0255/05/17 վճռով «Նորակ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, ՀՀ ֆինանսների նախարարության՝ պատասխանողի կողմից 31.10.2017թ. կազմված թիվ 1012740 ակտն ամբողջությամբ անվավեր ճանաչելու պահանջի մասին բավարարվել է մասնակի և ***անվավեր է ճանաչվել 31.10.2017թ. կազմված ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 1012740 ակտի «Շահութահարկ» վերտառությամբ 1-ին և «Ավելացված արժեքի հարկ» վերտառությամբ 3-րդ միջամտող կետերը:***

Այսպես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Խորհուրդը գտնում է, որ «Նորակ» ՍՊԸ-ն «ԱՄՍՆՀ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում հետևյալ պատճառաբանությամբ.

Ընկերության կողմից «ԱՄՍՆՀ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի մասնակցության հայտը ներկայացվել է ***28.12.2018թ.,*** մինչդեռ նշված Ընթացակարգի շրջանակներում արձանագրված՝ Ընկերության ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու փաստի հիմք հանդիսացած ՀՀ ԿԱ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության թիվ 1012740 ստուգման ակտը Ընկերության կողմից դատական կարգով վիճարկվել է դեռևս ***23.11.2017թ. (թիվ ՎԴ3/0255/05/17 վարչական գործ):***

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ վիճարկման հայցի վարույթ ընդունելը կասեցնում է վիճարկվող վարչական ակտի կատարումը մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը: Հետևաբար Ընկերության կողմից Ընթացակարգին հայտ ներկայացնելու օրվա դրությամբ վիճարկվող թիվ 1012740 ստուգման ակտի կատարումը կասեցված է եղել:

Դրա հետ մեկտեղ, Խորհուրդն արձանագրում է, որ 05.02.2018թ. օրինական ուժի մեջ է մտել ՀՀ վարչական դատարանի 29.12.2017թ. թիվ ՎԴ3/0255/05/17 վճիռը, որի համաձայն՝ «Նորակ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, ՀՀ ֆինանսների նախարարության՝ պատասխանողի կողմից 31.10.2017թ. կազմված թիվ 1012740 ակտն ամբողջությամբ անվավեր ճանաչելու պահանջի բավարարվել է մասնակի և ***անվավեր է ճանաչվել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 31.10.2017թ. 1012740 ստուգման ակտի «Շահութահարկ» վերտառությամբ 1-ին և «Ավելացված արժեքի հարկ» վերտառությամբ 3-րդ միջամտող կետերը:***

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդն արձանագրում է, որ «Նորակ» ՍՊԸ-ն «ԱՄՍՆՀ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտումը և Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետը՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 01.02.2018թ. թիվ 03/26-3/1623-18 գրությամբ «Նորակ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 04203321) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**